Տարբերակ 1.0
Հաստատված է տնօրենների խորհրդի կողմից
27.11.2024թ.

«ԶԱՆԳԵԶՈՒՐԻ ՊՂՆԶԱՄՈԼԻԲԴԵՆԱՅԻՆ ԿՈՄԲԻՆԱՏ»

ՏԵՂԱԿԱՆ ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերությունը (այսուհետ՝ «ԶՊՄԿ» կամ «Ընկերություն») իր գործունեության շրջանակում ձգտում է ապահովել արդյունավետ և դրական ներկայություն տեղական համայնքներում՝ բնակչության զբաղվածության ավելացման և տեղական տնտեսական զարգացմանն աջակցելու միջոցով: Ակնկալվում է, որ Ընկերության բոլոր շահագրգիռ կողմերը, ներառյալ՝ աշխատակիցները, տեղական համայնքները, բաժնետերերն ու կապալառու կազմակերպությունները պետք է նպաստեն տեղական զբաղվածության և տնտեսական զարգացման՝ Ընկերության նպատակներին:

Սույն Քաղաքականությունը վերաբերում է ԶՊՄԿ Տնօրենների խորհրդին, Ընկերության ամբողջ անձնակազմին, ներառյալ՝ բարձրագույն ղեկավար կազմը, ինչպես նաև Ընկերության կապալառուներին, գործընկերներին, հյուրերին և այցելուներին այնքանով, որքանով կիրառելի է:

Սույն Քաղաքականության շրջանակում Ընկերությունը՝

- ակտիվ առաջնորդության միջոցով խրախուսում է աշխատանքի ուղղակի, անուղղակի և խթանված հնարավորությունների ստեղծումը ազդակիր համայնքներում՝ նպաստելով տնտեսական աճին և համայնքի զարգացմանը:

- ապահովում է Ընկերության գործունեության համապատասխանությունը (և ակտիվ աշխատում է նույնը մեր գործընկերների մասով ապահովելու հարցում) ՀՀ օրենսդրությանը (օրինակ՝ ՀՀ աշխատանքային օրենսգրքին և այլ նորմատիվ իրավական ակտերին) և կիրառելի միջազգային ստանդարտներին, ներառյալ՝ ՄԱԿ-ի Կայուն զարգացման նպատակներին և ԱՄԿ 8 հիմնարար կոնվենցիաներին (1):

- ըստ անհրաժեշտության լիազորում և աջակցում է Ընկերության կապալառուներին, գործընկերներին տեղացիներին աշխատանքով ապահովելու առաջնահերթության հարցում՝ երաշխավորելով, որ վերջիններս կիսում են տեղական զբաղվածության ապահովման Ընկերության հանձնառությունը և ակտիվորեն նպաստում են համայնքի բարեկեցությանը:

- վարում է տեղական թեկնածուների (դիմորդների) տվյալների բազա, ովքեր հետաքրքրություն են հայտնել Ընկերությունում աշխատանքի ընդունվելու հարցում՝ նշելով նրանց հմտություններն ու փորձը: Նշյալ տվյալների բազան կօգտագործվի տեղական հավաքագրման ակտիվ աջակցության համար:

- առաջարկում է նպատակային ուսուցում՝ հնարավորինս ապահովելու, որ համայնքի անդամները, հատկապես երիտասարդները և խոցելի խմբի անդամները ստանան անհրաժեշտ որակավորում՝ Ընկերությունում թափուր հաստիքների հայտնվելու դեպքում դրանք լրացնելու համար:

- առանց որևէ խտրականության խթանում և ապահովում է աշխատանքի հավասար հնարավորություններ:

- հատկացնում է միջոցներ տեղական զբաղվածությանն ուղղված նախաձեռնություններն արդյունավետ կերպով իրականացնելու և զարգացնելու համար՝ ընդգծելով Ընկերության հանձնառությունը տեղական տնտեսական կայունության և աճի մեջ առանցքային ներդրում ունենալու հարցում:

- պարբերաբար իրականացնում է Ընկերության՝ տեղական զբաղվածության ապահովման ցուցանիշների մոնիտորինգ և բաց քննարկում շահագրգիռ կողմերի հետ՝ արժեվորելով թափանցիկությունը և համայնքի կարծիքը տեղական տնտեսական ներդրումները խթանելու Ընկերության շարունակական ջանքերում:

- պարբերական աուդիտների և վերանայումների շրջանակներում գնահատում է սույն Քաղաքականության կիրառման արդյունքներն ու ցուցանիշները, բացահայտում է դրանց բարելավման ուղղությունները:

Նախագծի ղեկավար՝
Արտյոմ Պետրոսյան

Հեղինակ՝
Արմեն Ստեփանյան

Tel: +374-60-500003, +374-285-33131
Email: info@zcmc.am

Հրապարակման ամսաթիվը՝ 25.12.2024թ.

(1) «Միավորման ազատության և կազմակերպվելու իրավունքի պաշտպանության մասին», 1948թ. (No. 87), «Կոլեկտիվ բանակցություններ կազմակերպելու և վարելու իրավունքի սկզբունքների կիրառման մասին», 1949թ. (No. 98), «Համարժեք աշխատանքի դիմաց տղամարդկանց և կանանց հավասար վարձատրման մասին», 1951թ. (No. 100), «Աշխատանքի և զբաղվածության բնագավառում խտրականության մասին», 1958թ. (No. 111), «Նվազագույն տարիքի մասին», 1973թ. (No. 138), «Հարկադիր աշխատանքի վերացման մասին», 1957թ. (No. 105), «Երեխայի աշխատանքի վատթարագույն ձևերի մասին», 1999թ. (No. 182):